

Հաստատում եմ՝ 20 մարտի 2026թ.

Հայ-Ռուսական համալսարանի

գիտական գծով պրոռեկտոր,

փիլիսոփայական գիտությունների դոկտոր,

Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,

պրոֆեսոր Ավետիսյան Պարգև Սերգեյի



ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Աղաբեկյան Մանան Պայքարի

ԲԱԶՄԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀՆՁՅՈՒՆԱԿԱՆ-ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԲՐԻՏԱՆԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԹՈՔ-ՇՈՈՒՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)

թեմայով

Ժ.02.07 «Ռումանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության վերաբերյալ

Բազմակողմ խոսքային հաղորդակցության նկատմամբ հետաքրքրությունը պայմանավորված է ժամանակակից կյանքի պահանջներով: Ներկայումս այն հաղորդակցության տարածված ձև է, հատկապես այն իրավիճակներում, որոնք ենթադրում են որոշումների մշակման բանավոր գործընթաց: Բազմախոսության ուսումնասիրությունը ներկայումս դիտվում է որպես ժամանակակից լեզվաբանության կարևոր ուղղություն: Այն շարունակում է մնալ քննարկման հարց՝ դիտելով այն թե՛ որպես ինքնուրույն խոսքային գործունեություն, թե՛ որպես երկխոսության տարատեսակ: Վերջին տարիների ուսումնասիրություններն առավելապես հիմնվել են

գրավոր տեքստերի վրա, մինչդեռ բանավոր, հանպատրաստից բազմախոսությունը քիչ է ուսումնասիրվել: Հեռուստատեսային խոսույթի ժանրերը, որոնք մեծ դեր ունեն իրականության ներկայացման և հասարակական ընկալումների ձևավորման մեջ, գրեթե անտեսված են եղել: Թոք-շոունների վերլուծությունը բացահայտում է բազմախոսության հնչյունական և գործարանական առանձնահատկությունները՝ ընդգծելով դրանց կարևորությունը: Ատենախոսությունը նվիրված է այս խնդիրների քննությանը՝ կենտրոնացնելով ուշադրությունը քաղաքական բազմախոսական հաղորդակցությունների վրա՝ միաժամանակ բացահայտելով դրանց հնչյունական և գործարանական առանձնահատկությունները: Համագործակցային և կոնֆլիկտային ռազմավարությունների վերլուծությունը հնարավորություն է տվել ատենախոսին խորությամբ ներկայացնել քաղաքական բազմախոսական հաղորդակցությունների բնույթն ու դերը:

Աշխատանքի նպատակը քաղաքական-հասարակական թոք-շոունների հիման վրա բազմախոսության լեզվական և արտալեզվական հատկանիշների բացահայտումն է՝ շեշտադրելով այն հնչերանգային միջոցները, որոնցով խոսողը իրականացնում է հաղորդակցական ռազմավարություններն ու մարտավարությունները:

Հետազոտության գիտական նորույթը կայանում է բազմախոսության հնչերանգային առանձնահատկությունների համակարգային նկարագրության մեջ՝ համադրելով մենախոսական, երկխոսական և բազմախոսական ձևերի հակադրությունը, հեռուստատեսային ժանրերի դասակարգումը և թոք-շոունների լեզվական ու արտալեզվական հատկանիշների վերլուծությունը՝ ապահովելով համագործակցային ու կոնֆլիկտային ռազմավարությունների հնչերանգային ուսումնասիրությունը:

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է բազմախոսական հաղորդակցության հնչերանգային և գործարանական առանձնահատկությունների նկատմամբ աճող հետաքրքրությամբ ու քաղաքական-հասարակական թոք-շոունների կարևորությամբ ժամանակակից հաղորդակցությունում:

Տեսական արժեքը պայմանավորված է նրանով, որ հետազոտության արդյունքները նպաստում են հեռուստատեսային խոսույթի ժանրերի ձևավորման խնդրի զարգացմանը՝ հաշվի առնելով հեռուստահաղորդակցման առանձնահատկությունները:

Հետազոտության գործնական արժեքը կայանում է նրանում, որ դրա արդյունքները կարող են կիրառվել լեզվաբանության և մեդիախոսույթի ուսուցման մեջ՝ նպաստելով սովորողների հաղորդակցական կարողությունների զարգացմանը և մասնագիտական հաղորդակցական մշակույթի ձևավորմանը:

Ներածության մեջ ներկայացված են ատենախոսության թեման, ուսումնասիրության ոլորտը և առարկան, սահմանվել են նպատակը և խնդիրները, ընդգծվել են գիտական նորույթն ու արդիականությունը, ինչպես նաև հստակեցվել են մեթոդաբանական հիմքը, հետազոտության մեթոդները և դրա տեսական ու գործնական արժեքները:

Առաջին գլխում հեղինակը քննում է խոսքային գործունեության ձևերը՝ առանձնացնելով բազմախոսությանը բնորոշ հատկանիշները և հաստատելով դրա կարգավիճակը որպես առանձին ենթատեսակ: Այնուհետև նա վերլուծում է բազմախոսությունների մասնակիցների դերային բաշխումը՝ առաջարկելով մոդերատորի, առաջնորդի և մեկնաբանի դերերի համապարփակ տարբերակները: Այս գլխում դիտարկված են նաև հասցեագրման և փոխազդեցության ձևերը բազմախոսական հաղորդակցության մեջ, ինչպես նաև քաղաքական խոսույթում բազմախոսության դրսևորումները, որտեղ հիմնական նպատակը իշխանության համար պայքարն է: Վերջում ատենախոսն առանձնացնում է թոք-շոուները որպես բազմախոսության տեսակ և վերլուծում հաղորդակցական ռազմավարությունները՝ շեշտադրելով համագործակցային ու կոնֆլիկտային մոտեցումները:

Երկրորդ գլխում ատենախոսը ուսումնասիրում է փորձառական-հնչյունական հետազոտության մեթոդաբանությունը, ներկայացնում գործաբանական վերլուծության մոտեցումը՝ դասակարգելով կոնֆլիկտային, համագործակցային և չեզոք ռազմավարությունները: Նա քննում է առոգանության ուսումնասիրության

Ժամանակակից գործաբանական մոտեցումները՝ ընդգծելով «ինչ է ասվել» և «ինչպես է ասվել» գործոնների միահյուսումը: Ատենախոսը տարբերակում է արտահայտչական և վերաբերմունքային հնչերանգները՝ ցույց տալով դրանց դերը գործաբանական իմաստի ձևավորման մեջ: Վերջին ենթազույգներում նա նկարագրում է ուսումնասիրության նյութը, վերլուծության փուլերն ու մեթոդները, ինչպես նաև լսողական և էլեկտրաակուստիկ վերլուծության կիրառումը:

Երրորդ գլխում, որը նվիրված է բազմախոսության կոնֆլիկտային և համագործակցային ռազմավարությունների առոգանական նկարագրին, ատենախոսը վերլուծում է քաղաքական-հասարակական բազմախոսություններում կիրառվող կոնֆլիկտային ռազմավարություններն ու մարտավարությունները: Նա օրինակ է բերում BBC Newsnight-ի 2011թ. «The Whites Have Become Black» թողարկումը, որտեղ քննարկվում են Լոնդոնի խռովությունները: Մասնակիցները հանդես են գալիս կտրուկ և իրարամերժ կարծիքներով, հաճախ ընդհատում են միմյանց և փորձում վերահսկել խոսքը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ առաջնորդը կիրառել է նախաձեռնության չարաշահման ռազմավարություն՝ երկար ու չընդմիջվող խոսքերով և հաճախակի մեկնաբանություններով: Այսպիսով, գլխում ընդգծվում է կոնֆլիկտային ռազմավարությունների դերը քաղաքական բազմախոսական հաղորդակցության մեջ: Այս գլխում ատենախոսն ուսումնասիրել է նաև քաղաքական-հասարակական բազմախոսությունների մասնակիցների կիրառած համագործակցային ռազմավարություններն ու մարտավարությունները, ինչպես նաև դիտարկված են խառը տիպի բազմախոսությունները, որոնք միաժամանակ ներառում են թե՛ կոնֆլիկտային, թե՛ համագործակցային տարրեր: Այս գլխում ատենախոսն ըստ ամենայնի ներկայացնում է քաղաքական-հասարակական բազմախոսությունների մասնակիցների խոսքի առոգանական միջոցների հնչերանգային պատկերը, որը ձևավորվում է լսողական և էլեկտրաակուստիկ վերլուծությունների համադրությամբ: Վերլուծությունը ցույց է տալիս, թե ինչպես են տարբեր ռազմավարություններն ու մարտավարությունները արտահայտվում հնչերանգային մակարդակում: Այսպիսով,

կարևորվում է հնչերանգի դերը բազմախոսական հաղորդակցության ռազմավարությունների ամբողջական ընկալման մեջ:

Եզրակացություններում ամփոփված են ուսումնասիրության ամբողջական արդյունքները՝ ընդգծելով բազմախոսական հաղորդակցության հնչերանգային առանձնահատկությունների, ռազմավարությունների և մարտավարությունների վերլուծության հիմնական դրույթները: Դրանք ամփոփում են թե՛ տեսական, թե՛ գործնական արժեքները, ցույց են տալիս հետազոտության գիտական նորույթն ու արդիականությունը: Եզրակացությունները նաև ընդգծում են քաղաքական-հասարակական թոք-շոուների բազմախոսական բնույթի կարևորությունը: Այսպիսով, ամբողջ աշխատանքը հանգում է այն մտքին, որ հնչերանգը և գործաբանական միջոցները վճռորոշ դեր ունեն արդյունավետ հաղորդակցության ապահովման գործում:

Այսպիսով, Մանան Աղաբեկյանի ատենախոսությունը արդիական է թե՛ ուսումնասիրության առարկայի, թե՛ ընտրված մեթոդաբանության առումով: Աշխատանքում ընդգրկված է լայնածավալ փաստական նյութ, որը հեղինակին հնարավորություն է տալիս կատարել ծանրակշիռ ընդհանրացումներ: Ատենախոսությունը աչքի է ընկնում նյութի խորը ուսումնասիրությամբ և իմացությամբ, շարադրանքի հստակությամբ, գիտական խորքային վերլուծությամբ:

Բարձր գնահատելով ատենախոսի կատարած աշխատանքը՝ այդուհանդերձ կցանկանայինք ստանալ որոշ հարցերի վերաբերյալ պարզաբանումներ:

1. Աշխատանքում որոշ խառնաշփոթ է առաջացնում հեղինակի կողմից օգտագործվող *քաղաքական խոսույթ* և *քաղաքական-հասարակական խոսույթ* տերմինների կիրառությունը: Որո՞նք են դրանց բնորոշ առանձնահատկությունները:
2. Հեղինակը հստակ առանձնացնում է երկխոսություն և բազմախոսություն եզրույթները: Չե՞ որ կարելի է պնդել, որ երկխոսություն եզրույթը հաճախ ենթադրում է մեկից ավելի անձանց հաղորդակցություն:

3. Ատենախոսը տարանջատում է իլոկուտիվ մեղմացում եզրույթը: Հայտնի է, որ լեզվաբանական գրականության մեջ ընդունված իլոկուտիվ ակտ հասկացությունը ենթադրում է խոսողի մտադրության հստակ ձևակերպում: Զուգակցվելով մեղմացման հետ՝ իլոկուտիվ ակտի ուժը կարծես կորչում է:
4. Աշխատանքում օգտագործվում է չեզոք ռազմավարություն հասկացությունը: Ինչպես հայտնի է թոք-շոուները հաճախ կառուցվում են հակադրության, բանավեճի և երբեմն բախման վրա, ռազմավարություն եզրույթը սովորաբար նշանակում է ակտիվ գործողությունների համակարգ, այնպես որ պահպանել բացարձակ չեզոքության ռազմավարություն չափազանց դժվար է: Թերևս ավելի ճիշտ է կիրառել հարաբերական չեզոք ռազմավարություն հասկացությունը:
5. Հեղինակը կատարել է հետազոտություն բրիտանական թոք-շոուների հիման վրա. ավելի ճիշտ չէր լինի՝ կոնֆլիկտային բազմախոսությունները դիտարկել ամերիկյան թոք-շոուների հիման վրա, իսկ համագործակցայինը՝ բրիտանական:
6. Ատենախոսության մեջ առանձնանում է կոնֆլիկտային բազմախոսության առաջնորդի դերը, ինչը, սակայն, համագործակցային բազմախոսություններում այդքան էլ հստակ ուրվագծված չէ: Այդ դեպքում ինչպե՞ս է առաջնորդի դերը դրսևորվում համագործակցային բազմախոսություններում, քանի որ հենց առաջնորդի շուրջ է կառուցվում հաղորդակցումը:

Վերը նշված հարցապնդումները ամենևին չեն նվազեցնում կատարված հետազոտության արժանիքները: Ընդհանուր առմամբ, կարելի է փաստել, որ իրականացված է բավականին լուրջ, տեսական և գործնական նշանակություն ունեցող հետազոտություն: Ատենախոսությունը բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջները և հեղինակն արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին: Սեղմագիրն իր

կառուցվածքով և բովանդակությամբ համապատասխանում է ատենախոսությանը:  
Հեղինակի տպագիր հոդվածները արտացոլում են ատենախոսության  
բովանդակությունը:

Վերոնշյալը թույլ է տալիս միջնորդել ԵՊՀ գիտական աստիճաններ շնորհող  
մասնագիտական խորհրդի առաջ՝ Մանան Պայքարի Աղաբեկյանին բանասիրական  
գիտությունների թեկնածուի հայցվող աստիճանը Ժ.02.07 «Ռոմանագերմանական  
լեզուներ» մասնագիտությամբ:

Գրախոսությունը քննարկվել և հաստատվել է Ռուս-Հայկական (Սլավոնական)  
համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի 2026  
թվականի մարտի 20-ին կայացած N7 նիստում:

Ատենախոսության քննարկմանը ներկա էին Ռուս-Հայկական (Սլավոնական)  
համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի  
հետևյալ անդամները՝ բ.գ.դ., պրոֆեսոր Կ. Մատինյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Ա.  
Սիմոնյանը, բ.գ.թ., դոցենտ Մ. Սարինյանը, դոցենտ Ն. Թովմասյանը, բ.գ.թ., դոցենտ Ս.  
Թումանյանը և այլք:

Առաջատար կազմակերպություն՝  
Ռուս-Հայկական (Սլավոնական)  
համալսարանի լեզվի տեսության և  
միջմշակութային հաղորդակցության  
ամբիոնի վարիչ,  
բ.գ.դ., պրոֆեսոր՝

Հաստատում եմ  
Գիտքարտուղար՝



Ա. Ա. Սիմոնյան

Ռ. Ս. Կասաբաբովա